ՀԱՆԴԷՍ

Գ· ՏԱՐԻ

ՀՐԱՏԱՐ Գ·

ԹԻՒ ԼԱ· 31 1877 ՅՈՒՆՎ· 29՝ ՇԱԲԱԹ

ԸՆՏԱՆԵԿԱՆ

ԽԵՆԴԵՐՈՒՆ ՏՕՆԸ

ԵՒ

ՄԵՐ ԲԱՐԿԵՑՈՒԱՆԸ

Ամեն մը եւրոպիոյ մէջ տեղ տեղ խենդերուն այն տօ-
ւիճան յարդ ու պատիւ ունէին, որոց համար յատուկ
տօնախմբութեանց օրեր որոշուած էր՝ տարւոյն վերջին եւ
առաջին ամսոյ եռքի եւ առաջին վեց օրերն՝ Դեկտ. 25էն
մինչեւ Յունվար 6՝ ամբողջ 12օր, եւ խենդերու հռչակեալ
տօնն ամեն ամէնուն ախորժանիւտ քաղաքներ եկեղեցական հան-

դէմ ներով կ'կատարէին, որոց հաւատալու խակ կ'երկբայէ մարդ։

Խենդերուն ծանկին նախապահելու համար մէկին Երք-եպիսկոպոս կամ Պապ կ'ընտրէին և ընտրուած մարդն եպիսկոպոսի զգեստ կ'հագնէր թիառա (պապական թագ) մի ալ դրուխն կ'դնէր և սորա լուսարարապետ կարգեալ պաշտօնեայն ժողովրդեան խենդ ու խելառ օրհնութիւններ կուտար «Տէր Երեպիսկոպոսը կ'ըսէր, որ հոս ներկայ է Յէր ամենուն պահա. մի լեյուն խելք կ'պայ, չուան պահա ակոյի Յէս կ'ընորհէ, և մինչև հիմա ըրած ընորհքնե-րուն վերայ մեկ մի ալ խոզի պոչ կոպայ»։ Ժողովուրդն ալ «Ամեն եղիցի» կ'ազալակէր։

Երբեպիսկոպոսին քով կեցող պաշտօնեայք և հան-դիսականք ալ երեն պես այլանդակ կերպարանքներու մէջ մտնալու էին, համայն եկեղեցի գացող ժողովուրդն դիմակ դնելու էր, վիպերնին մեկ մեկ պզտի չղթայ, հան-դերձներնին կատակերգութեան խեղկատակի և այլ այսպէս ձևով, ոմանք ալ երեսնին տեսակ տեսակ ներկեր կ'քսէին և խենդի պես հոս ու հոն կ'վազէին կ'ցատկռտէին, երբեմն այս հանգէսն հասարակաց դերեզմանատան և երբեմն եկեղեցեաց մէջ կըլլար որ 800 տարիէ աւելի տե-ւող և ամբողջ Հռովմա, Գաղղիա, Անգղիա, Սպանիա Ա-ւըստրիա և Իտալիա ճարակեցաւ այս յիմարական ծանկը և այն ժամանակի մարդոց մեծամամնութիւնն ջրրիսա-նեբեան համեմատ արարողութիւններ կ'կարծէին և ով որ աստոց դէմ խօսեր հերձուածող և բանադրանաց ար-ժանի կ'համարուէր։

Այն ժամանակի մարդոց ըրածներուն երկբայու-թեամբ հաւատալով հանդերձ՝ մենք նմանօրինակ բաներ կընենք նոյնիսկ մեր ընտանեկան ակումբներուն մէջ, որ

պարկեշտ քաղաքացիի և ազնուական ընտանեաց բնաւերքը ներկի չեն ու ամենուն ղզուանքն ու նողկանքն կ'հրաւիրեն իրենց վերայ։

Ի՞նչ կ'նշանակեն բարեկենդանի աւուրց չախտագանց կերուխումներն, արբենութիւնները, յոխորթիւնները, այր մարդոց կանանց հագուստ հագնելն, դիմակ դնելն, սատանայի, ալիքի ու գայլի կերպարանք մտնելն, անպատշաճ հագուստներն, գլխի ցնցոնատարդ, պօչատար և այլանդակ ձևերով դէկաարկներն, մրով, մեչանով, ալիւրով և ներկերով ծածկեալ երեսն, և այլն, ո՞չ ապաքէն այս ամենքն ալ մեր չիմարութեան ապացոյցներն են, և ցոյց կ'տան թէ՝ տակաւին Հայոց ընտանեկան կեանքի մէջ խենգերու տօն կատարողներ պակաս չեն և բարեկենդանի օրերն այս կարգի ընտանեաց խենդութեան օրերն են։

Ընտանեաց հայրերն և պաշտպաններն հարկ է այս կէտն ուշադրութեան առնեն և ընտանեաց մէջ մտած խել մի անպարկեշտ խաղերն, այլանդակ սովորութիւններն, հեշտական երգերն, առատապէս քանութիւններն և անմեղ զբաղումներն վիրաւորող, անչափահասներն գլխէ հանող գայթագղեցուցիչ խօսքերն, շարժուձևերն և այլն ընտանեկան չեմքէն վանել ու դուրս հանել և այդ զեղծումներուն բարձման համար ոգւով չափ տքնիլ և բոլոր կրնալոյ նշանակութիւնն ու նպատակն ճանչցնել։

Շատերն բարեկենդանը խենգերու տօնին տեղ դրած են, մինչդեռ նա նախապատրաստութիւն մի է սրբութեան աւուրց, մարդկային կենաց ամենէն լաւագոյն ու բարի օրերուն և անմեղութեան յիշատակին նուիրեալ, և բարեկենդանի աւուրց զեղծումներն և յատկ սովորութիւնները մոլութեանց տեսակ մի են, որ քաղաքացի,

աշխուատկան պարկեշտ ու առաքինի մարդոց համար ընդ միշտ խոտնելի պետք են ըլլալ։

ԵՐՈՒԿՆ ՀՐԱՉԵԱՑ

Ա Զ Գ Ա Ց Ի Ն

ԳԱՐՁՔ ԵՒ ԻՐԱԽՈՒՆՔ

Ե Կ Ե Ղ Ե Ց Ա Կ Ա Ն Ա Ց

(շար· եւ վերջ տես բիւ Լ·)

Թերևս առարկողներ ալ գտնուին թէ՝ այս կամ այն եկեղեցականն ապեկ կ'հագուի՝ ապեկ կ'ուտէ, այսչափ կալուած, տուն տեղ և կամ բաւական հարստութեան տէր է։ Այս առարկութիւնն Թերևս մեր գրածներն ալ կարացընելու չափ զօրէին եթէ՝ բոլոր եկեղեցականաց համար ալ այսպէս կարենայինք ըսել թէ՝ ապեկ կ'ապրին, ապեկ կ'ուտեն ևն, մինչդեռ հարիւրին տասնին համար ալ քիչ մի կ'վարանինք, քանի որ այս կամայն եկեղեցականներն ունեցած հարստութիւնն, կալուածն իրեն անձին միայն կ'սեպհականի, որ ժամանակին պաշտպաններէն օգուտ քաղելով յաջողած է իւր ապագան քիչ շատ բարելաւել։

Մեր ժողովրդեան մեկ մասն այն հնացեալ համոզմունքն ունի թէ՝ մարդ մը վերար, դիմարկ, վերարկու վիլոն ունենալուն՝ ամեն բան ունեցած կըլլայ և թէ ամբողջ ժողովուրդն այդ դաս մի սևեռով պատանքուած մարդոց համար կաշխատի, թէ ամեն բան այդ մարդոց համար ձրի կ'վաճառուի։ Եթէ մեր ուսուցչականներուն և եկեղեցականաց վերայ առատ առատ խօսող բարեկամներուն հար-

ցընենք թէ՝ Քահանայից Լինչ առած ես, կ'պատասխանէ «ես չեմ առած և չեմ ալ առը, բայց ռամիկն կ'ասէ» ռամիկն պիտի իմանանք Ժողովրդեան ոգէտ մասն, նա ալ կըսէ թէ՝ հարուստն կ'ասէ, հարուստն ալ ժողովուրդն Թող հոգայ կըսէ, հետևաբար այն ժամանակներն անցած է հիմա, պէտք է այս համոզումներն փոխենք, և եկեղեցականոց ալ ըսել թէ՝ աշխատեցէք ու ապրեցէք եթէ աշխատիք Հեղ հարցնող կըլլայ, թէ չ'աշխատողին հաց չ'կայ։

Մշակն իւր վարձուց արժանի է, չիտակն խօսելու համար վաձքն իւր աշխատող մշակին չպատաւ և մշակն ալ իւր վարձքն։ լա՛ւ է ուրեմն աշխատելու կարող եկեղեցականք ժողովրդեան բարւոյն, յառաջադիմութեան հակեն, անձնուէր իրենց կոչման մէջ և իրենց հոգևոր պարտականութիւններն անթերի կատարեն, հարկաւ մի օր մշակն ալ իւր իւր վարձքն լիապէս կընդունի։

—

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

«Այժմ ամենքի ուշադրութիւնը Տաճկաստանի վերայ ուղղած է։ ամենից առելի հետաքրքրութիւն շարժուած են և գրաւած ամենքին այնտեղից եկած լուրերն։ Այժմ ամենքն էլ անհամբերութեամբ սպասում են, թէ այնտեղ դումարված վեհազանազոսքը ի՞նչ եզրակացութեան կը հանի, նորա մէջ քննուելու հարցերի վերաբերութեամբ, որովհետև նորա հետ կապուած են ոչ միայն Տաճկաստանի հպատակների ապագայն, այլ և շատ եւրոպական աերութեանց չահերը։ Այս հարցերի վճռման ձևից և ուղղութիւնից ունի ապաւինիք և մեր Հայ ազգի միձամանաւթիւնն, որ բնակւում է Տաճկաստանում։ Դեռ-

պանաժողովի քննութեան ենթարկուելիք հարցերի շարքումն է անշուշտ և Հայոց հարցն, որովհետև ինչպես տեսանում ենք, Եւրոպական դաշտային լրագիրներում վերջին ժամանակներս երևում են յօդուածներ և հերքատուքակագրեր, որոնք դարձնում են Եւրոպական ազգերի և կառավարութեանց ուշադրութիւնն և Հայ ազգի վերայ։ Այսպես բացի Մեծ. Պ. Ս. Աբգարի յիշատակագրից, որ ամբողջապես կամ քաղուած քօրէն երևեցաւ Եւրոպական մի քանի լեզուներով դաշտային պարբերական հրատարակութեանց մէջ, երևեցան և այլ յօդուածներ, որոնք անշուշտ պէտք է դարձնէին Եւրոպական տէրութեանց ուշադրութիւնը Հայ ազգի վերայ, որ Տաճկաստանի մէջ մի գլխաւոր և նշանաւոր տարր է կազմում, բաղկացած լինելով 4 միլիօն անհատից, այն ևս մի նատակեաց, զբաղուորապէս հողագործ, արհեստաւոր և վաճառական ժողովուրդ կազմող անհատներից։ Վերջին ժամանակ և Ռուս հրատարակութիւնք ուշք դարձնում են Հայոց վերայ, երբ խօսք լինում է Տաճկաստանի քրիստոնէից և նորա մէջ տեղի ունեցելիք յեղափոխութեանց համար։ Մեզ հաղորդում են, որ Մեծ. Բրիթիս, Ընդհանրի երևելի քարոզիչը, խօսել է Սալիսբուրիի հետ Հայերի մասին իբրև Տաճկաստանի մի ամենանշանաւոր և ընդունակ ազգի վերայ, որ անհրաժեշտ է Ազիայի յառաջադիմութեան համար և որ Ընդհանրի համակրութեան արժանի ազգ է, իբրև վաճառաշահ և ձեռնհաս կանոնաւոր ունեցուածքի Ազգ։ Նոյնպէս հաղորդում են, որ Կ. Պօլսոյ Հայերն իրանց վարչութեան միջնորդութեամբ ուղղում են ուղերձ իրանց կառավարութեան, որ պահանջողովի մէջ որոշուելիք յեղափոխութեանց ժամանակ չմոռացուի և Հայոց Ազգը։ Անշուշտ դրած կը լի-

նին և մեծ ազգութեանց դեսպանների ուշադրութիւնը։

Այս իրողութիւններից յետ անկասկած է, որ երբ դեսպանաժողովի մէջ խօսք կը լինի ընդհանուր յեղափոխութեան վերայ բոլոր Տաճկաստանում—անշուշտ հարցերի չարքում տեղն կունենայ և Հայոց հարցը։ Այս հարցը անտարակոյս կը դրաւէ թէ Ռուսաց դեսպան գիներ. Իգնատիեվի և թէ Անգլիական դեսպանի ուշադրութիւնը, և ոչ մի տարաձայնութեան տեղիք չէ կարող տալ։

Դրականն առ այժմ այն է, որ Ազգեր հարցի ո. րոշման ժամանակ Հայ Ազգի վիճակը Տաճկաստանում անշուշտ պիտի ենթարկվի փոփոխութեան և այն դէպի լաւը. որովհետև Տաճկաստանի յեղափոխութեանց իրրև անհրաժեշտ հիմունք ճանաչվում և ընդունվում են իրաւանց հաւասարութիւնը, ազգականութեան ապահովութիւնն, որոնցից մինչև յայժմ աշխատասեր Հայը զուրկ է եղած։ Այդ երկուսն էլ երաշխաւոր են մի ժողովրդի զարգացման։ Այլ թէ որչափի իրաւանց և արտօնութեանց տիրապետի շրջանի մէջ կամնովվի Հայ Ազգի կեանքը Տաճկաստանում ապագայում, դեռ անհնարին է գուշակել։ Այդ դեսպանաժողովի որոշումներից միայն կերևի և կամ թէ սա համաձայնութեամբ մի եզրակացութեան չհասնի և գործը հասնի պատերազմի—այն ժամանակ Հայերի վիճակն էլ որոշ կերպարանք կ'առնայ դորա վերջանալից յետ, երբ խաղաղութիւն կը տիրանայ յիշեալ դաշնագրութեանց հիման վերայ, որոնք կորոշեն անշուշտ և Տաճկաստանի ներքին վիճակը, սորա հետ և նորա հպատակ Ազգերի դրութիւնը։

Թէ այսպէս և թէ այնպէս, Տաճկաստանի ներկայ Հայերը շատ և շատ աւելի բաղդատուր են իրանց պապերից, որ նոցա տխուր վիճակը համեմատաբար աւելի լայ

պատիկը պիտի առանձայ ընորհիւ հանդամանքներուն և եւրոպական մեծ ցերեմոնիայ ուշադրութեան։

Ի՞նչ կը ձեռայ այնուհետև Տաճկաստանի Հայերուն ցանկալ։ Ան միայն, որ նորա օգուտ քաղելով իրանց անցեալից իրանց ապած պահանջից և գուցէ շատ՝ շահաւէտ հանդամանքներ անդրդուշելութեամբ կորցրած լինելից, չանան խոհեմութեամբ, աւելի չըվանկատ կերպով զարգացնելու իրանց բոլոր կարողութիւնը կանոնաւորապէս։ Այսպէս նոցա կեանքը աւելի կենդանութիւն կ՚ստանայ, կաճի և կը կազդուրվի նոր երիտասարդութեամբ »։

Մեղուս Հայաստանի

—

ՄԱՀՃԱԼԸ

Ս. ՍԱՐԳԻՍ ՄԵԾԻՐԱՊԻՆ ՎԻՃ ՄԻԱՆԻՏՍԱՇԱՒԱՐԸՄԸՋԸՆ ՀԱԼԻ

Մահճալըճռաձ՚ս. Սարգիս նամինատ օլան մեքթեպլիմիզի ոճն տերէճէ սէֆիլլիքտէ կէօրախուք՝ մեքթեպլին էաղնէյէսի կիւղել վէ վասի սուրէթտէ նախըլմըշ, հալպու քի 181 խանէ Հայլարտան մեքթեպէ կիտիոզ կէլէն երքէք չօճուգլարըմըզըն աաէտի 30 տան զիեատէ օլմայուպ վէ զէզլար իչլուն առլա թէրպիյէ վէ թէատրին եօզտուբ։

Մեքթեպլի մէզպուր խոճաէֆէնտի՚ օ ուլմատ բաուզուս Սաղմոս, Գուծոց վէ Նարեկուէն խոպարէթ ախը։ Ընճնաճա՚դ հալ։

Լիրա եիւզ զուրուշ հիսապ իլէ, վէ նագտ ագճէ օլարագ՝ Ս. Սարգիս քիլիսէնին 20000 զուրուշու, վէ էօթէքլինին պէրիքինին իւզէրինտէ սէնէտլի 100 000 զուրուշու վար իլէն պէօյլէ պէօյլէ սէֆիլ մեքթեպ կէօրէպիլտիյիմիզ իչլուն քեաֆֆէյի միլլէթ փերվէր դալալար

կիսվի դալվի՞ճճիղանեմիղին առխի հիւսեճաթը քեռեր-անեսինի թարիֆ եթմեք միւմքինսիւղ տիր։

Պիղիմ օրաեա աղխմեթիմիղաե մեքթեպի դաւխալը պուլտուղ, դիրա հօճանըն 200 զուրուշ սյլըղը քենտի պորճլարընը նեմրի թեսկյեսինե իզթիֆա եթմեկյինտեն ֆիրար ետիպ կիթմիշ էտի։

Մահալըճըն պու սեֆիլ վե աճընաճաղ հալի օրա միլլեթտաշլարըմըզըն պիրպիրլերի իլե հիւանիւ իմթիհանճ իշլըե իընիյեթի եաեմեկտիքճիլինաեն իլերու կելմիշ օլտուղունու տեքը ու ֆեհմ եթտիք պոլ պեյնլերինտե պիր ադըլըղ խոջատա տրը կիտեր, վե քենտի զավալլը էվլատլարընըն փերուշան հալինե սեպեպկյեթ վերը։

Ասլա իհթիրազ եթմեկիպ վե տօշրու սեօյլեմկյիմիղ թաքտիրտե պու կիւն Պալը-Քեսեր վիճակը իշինտե, տեյիլ քի ազճե վե իշ իլլա եիւրեք, ինսանկյեթքեար-լըղ վե իշկիւզարլըղ, վե մեքթեպ վե քիլիսեճե զայ-րեթ թարաֆընատան էն զիեատե թեսէննիտե օլան վե էն զիեատե սեֆիլ վե աճընաճաղ հալտա պուլունան մեքթեպ վե ահալի Մահալըճ մեքթեպ վե միլլեթտաշ-լարըմըզ տրը լար։

Հեչե Քիլիսե հալի փեք ֆենա վե աճընաճաղ պիր շեյ տիր։ Ըրթոթեոթան վայիզլեր նե պիր թարաֆտան օ-րտտա թեղեյիտի մեսաքին եթմեքտե վե պօլ պօլ չեքեար գաիմաք իչիւն մեզհեպ ֆարգընը թեչվիդ վե սատե-տիլանը իզֆալտա գուսուր եթմեքտե տիրլեր։

Պաե սեպեպտեն աղրը ատույտաղ Մահալըճ սեվ-կիւվիւ միլլեթտաշլարըմըզըն չու սորը միւնեվվեր մե-պարիվիւ միւզթեղիեատընա մուրթապեք սուրեթտե հա-րեքեթ եթմեկլերինի արզու ետերիզ։ Միլլեթեթի պարթի-եեվվիւ ասլընե իչիւն չեվգ ու զայրեթե կեչմինլեր։ զա-

բաղ ու քինի պէր թարաֆ էթմեմիշլէր. վէ պիրպիրինէ տայիմա էլ ուզատուպ ումումճա հալըրընդեն խալահը չաբհինի ֆիրամուշ էթմեմիշլէր։ Ուլում ու թէրպիյէ. պունլար չիմսի լինան իչուն պիրինճի մուդթէղիճաթան տըր։

Շիմսի տէոիյիմիզ, չինքի թէնիմիզ իհթիճաճաթընը ճան ու ֆիքր իհթիճաճաթըմըզը թանըմադան տահա դօլայ օլուպ վէ եվվէլքիլէրին իսէ տահա դիճաճէ պէհաուար օլտուղու անհրլէր հուլուվիյէ կէրէկի կիպի միւսպէթ ու մէչհուտ պուլունմադտա տըր։ Նասըլ քի չու եէնի իհտաս օլունան Գանունու խայրէթպախշը էսասխէ ճիմիլէնին քէնտի էվլատընը թէրպիյէ վէ թահլիմ էթմէսի քէյֆիյէթի իչուն լինաէլ նիզամ մէսուլ թուրթուլաճաղը սարահէթէն պէյան էտիլմիշ օլուպ, վէ նիզամաթա մուվաֆֆագաթ ու մութապագաթ տէյիլ էհալընըղ Մահալըճ սէքէնէսի իլլա հէր քէս իչուն լազիմտա տիւր։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՄԻՏՀԱԹ ՓԱՇԱՅԻ՝ ԱՆԿՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐՆ

Հոգեւանդ Ապտ-Իւլ-Ազիզ կայսեր անկման եւ յաւտակըտուր մահուանէն յետոյ՝ Միհաթի փաշա իբր ժողովրդային մարդ ճանչցուեցաւ իւր մի քանի ընկերներուն, որոց մէջ աւելի փայլ մի ունէր սա իւր անվեհերութեամբն եւ հայրենասիրութեամբն կանխաւ իւր գլխին մէջ առ ոտն կոխելով գալիք չարագոյն եւ անխուսափելի հետեւանքներն։ Եւ երբ Մեծ Եպարքոսութեան աթոռն բարձրացաւ աւելի ժողովրդեան սէրն ու համակրութիւնն առ ինքն դրաւուեց հայրենասիրական յոյցերու առաջնորդութեամբ եւ ոմանց ակար ղեպուծմներն դգուելով Թուրքիոյ բախան

ու վիճակըն իր ձեռքի մէջ առած գործի սկսաւ եւ թերեւս իր եռանգովը կ'չափէր եւ խնդրոյ մի հետեւանաց վերայ խորհելէն խուսափելով անխոնջ իր նպատակին կ'վազեր անվհերութեամբ։

Թերեւս մինք առիթքնիս անտեղեակ Միհոաթ փաչայի այս կամ այն վարմանց վերայ՝ Եպարքոսական անակնկալ փոխոխութեան վերայ ի յապշութիւն մատնեցանք եւ մեղմէ չառերուն իսկ անհատատալի թուեցաւ նորա այս տարաժամ պաշտօնանկութիւնն, մանաւանդ Օսմանեան հողէն դուրս տարագրութիւնն, իսկ 'քաղաքագէտք ոմանք նոր քաղաքականութեան մը կընձայէին այս ամէն եզածները, եւ այսպէս ամէն միտքեր վարանման մէջ կ'յուզուէր եւ հրապարակի վերայ բի'չ տեսակ կարծիքներ միմեանց կ'բաղխէին մինչեւ պաշտօնական յայտարարութեան ժամն, որ հետեւեալ տողերովը Միհոաթ փաչայի անկման եւ աքսորման պատճառն հասարակութեան կ'իմացնէր ։

« Հիմնական փոխոխութեամբ բոլոր Օսմ. հպատակք նոր դարագլուխ մը սկան · ըստ այսմ Աստուծով տեսնուելիք յառաջադիմութեանց մեծ ու պզտիկ բոլոր պաշտօնատարք սահմանադրութեան գծած սահմանին տակ աշխատելու պարտական ըլլալով հանդերձ՝ հրաժարեալ Մեծ–Եպարքոս Միհոաթ փաչային ընթացքը առը հակառակ գտնուելով եւ մեր Օգոստ. Սուլթանը իր բարձր հրամանաւը ջնջած միապետական դրութիւնը ուրիշ ձեւերու մէջ անցնելը եւ ուրիշ դոյն առնելը տեսնելով եւ այս նպատակը ունեցող ոմանց խռովարարոյ՝ Օգոստ. կայսեր իրաւանց եւ երկրին խաղաղութեան դէմ գործած գաղտնիքները լսուելով եւ երեւան ելլելով եւ Միհոաթ փաչայի իր գտնուած դիրքովը գտնուք արդիլելու միջոցներ ձեռք առնելու տեղ գտնզած վարուիքը բացարձակ միապետական դրութեան ուրիչ ձեւով մը երեւան գալուն համար՝ Սահմանադրութեան 113րդ յօդուածին գործադրութիւնը հարկ եզած է » ։

«Հետեւաբար այս գործադրութիւնը Օգոստ. կայսեր կողմէն Սահմանադրութեան կատարեալ պահպանութիւնն ըլլալով, ձըյնարտութիւնը ամենուն ծանուցանելու եւ խել մը սխալ մեկնութիւններ չը տրուելու համար ներկայ պաշտօնական ծանուցումը հրատարակութեան տրուեցաւ » ։

Պաշտօնական ծանուցման մէջ նշանակեալ Օսմ. Սահմ. 11-րդ յօդուածն կ'տրամադրէ « Սուլթանին ձեռնահասութենէն եւ Տաճկաստանէն հանել այն անձինքն որոց՝ կառավարութեան անպորրութեան վնասող ըլլալն կ'տեսնուի ոստիկանութեան հասատատուն քննութեամբն » : Թերեւս այս ըլլալու էր նա եւ Միհնաթ փաշայի անկման պատճառն :

Մենք ալ սիտի բաւականայինք այս պաշտօնական ծանուցմամբ եւ կարձէինք մեր այս յօդուածն եթէ Տաճկական եւ Բերայի թերթերէն մի քանին դրական հրապարակի վերայ Միհնաթ փաշայի նկատմամբ ուրիշ յանցանքներ ու պատճառներ յառաջ չբերէին եւ հասարակութեան բերանն ասորեր զրոյցներ չըպտրտէր :

Վազքը Միհնաթ փաշայի Սահմանադրութեան հակառակ գործերն կ'չարէ եւ կ'յաուելու թէ՝ «մեր Օգոստ. կայսեր Ինքն Իւր բացարձակ կամօքն հաստատած Սահմանադրութիւնը Միհնաթ փաշա իբրեւ իւր գործն հռչակելու եղաւ » եւ ապա իւր դրած յօդուածն սա երկու տողովն կ'վերջացնէ « Միհնաթ փաշայի մարդիկը դուրերը այնպիսի խառնիչ խօսքեր կընէին , որ վերջապէս Միհնաթ փաշա կասկածի ենթակայ եղաւ » :

Վազքը գրել չուզածն Լեւանդ Հերալտ աւելի հրմուռ թեամբ կ'գրէ , եւ սա կասկածանքէն զատ դատաճանութեան խնդիր մի ալ երեւան կ'հանէ , որոյ կարեւոր մասերն համառօտելով կ'տեսիլք ասա :

« Այն պաշտօնեայն (Միհնաթ փաշա) որուն վրայ ամէն յոյս կեդրոնացած էին եւ որուն բարեկիրթ եւ ամենէն աւելի քաղաքագէտ անձ մը ըլլալը կը կարծուէր , Սուլթանը գահընկեց ընելու գծուծ գաղափար մը ունեցած է որ եւ ինքզինքը իբր իշխող կանգնել անանկ արքայի մը իշխանութեան՝ նեղքեւ որուն միտքը տկար է : Միհնաթ փաշայի ներքոյս եղած ժամէն ի վեր , դիտցուած էր թէ Սուլթանին եւ իւր պաշտօնէին մէջ անվստահութիւն կը տիրէր » :

« Միհնաթի այս դիտաւորութիւնը այն ատեն յայտնուեցաւ երբ Սուլթանը կ'առաջարկէր թէ հասարակային ծառայութիւնները բարեխղճին օտար երկիրներէ մանաւանդ Անգլիայէն ձեռնհաս պաշտօնեայներ բերել տալով զոր սիկտ Միհնաթ փաշայի

կողմանէ կը մերժուէր : Կը թուի որ անցեալ չարչիռ այս խնդիրը Ն· Վեհափառութեան կողմանէ դիտողութեան առնուելով , Մեծ Եպարքոսը յանդիմանեց իր վախաքները չը գործադրելուն համար »։

«Մեծ Եպարքոսը կարճ պատասխան մը տալով պալատէն մեկնեցաւ , եւ առն երթալով Սուլթանին նամակ մը ուղղեց այնպիսի կերպով մը որ մէկ խօսքով ընաւ ակնածութիւն չէր պարունակեր »։

«Ասոր համար՝ պալատան կանչուեցաւ այս մասին բացատրութիւն տալու եւ Եպարքոսը յանդգնաբար Սուլթանին հրամանին չը հնազանդեցաւ եւ այս անհնազանդութիւնը չարունակեց մինչեւ երկը օր մինչդեռ չարունակ Սուլթանէն կը կանչուէր ։ Միտհաթ փաչային այս ընթացքը իր վեհապետին կասկածը արթնցուց, ոտիկանութիւնը պատրաստ դիրքի մէջ դրուեցաւ եւ կիրակի օրը թղթակցութիւն մը գտնուեցաւ , որմէ՝ Միտհաթ փաչայի Սուլթան՝ Ազիզ Համիտը գահընկեց ընելու դիտաւորութիւնը հաստցուեցաւ »։

«Առջի առաւօտ , վճռական լուր մը ղրկուեցաւ Միտհաթ փաչայի որ Տօլմաբախչէի պալատը ներկայանայ , որու հընազանդելու էր Միտհաթ փաչա ։ Պալատը մտած առեն հակողոճ թեան ներքեւ առնուեցաւ եւ առաջին անեղկատիրը խնդրեց որ եպարքոսական կնիքը յանձնէ ։ Ան առեն իրեն ցոյց տրուեցաւ նամակները որք իրեն դատաճան մը ըլլալը կ'հաստատէին եւ ո րովհետեւ իրեն նամակներն ըլլալը մերժելու ապացոյց մը չունէր , Միտհաթ փաչա ինքզինքը իր վեհապետին դիմումիանը յանձնեց ։ Պաշտօնէից խորհուրդ մը կազմուելով Միտհաթ փաչային մեծ դատաճանութեան յանցաւոր ըլլալը , եւ մահուան արժանի ըլլալը հաստատուեցաւ ։ Բայց Սուլթանը յիշեցուց թէ ըստ Սահմանադրութեան ոչ ոք կրնայ դատապարտուիլ առանց հրապարակային վճռի ։ Ան առեն Միտհաթ փաչայի հարցուեցաւ թէ կուզէ՞ իր մեծ դատաճան մը հանկարծիլ կամ թէ Օսմանեան երկրէն մեկնիլ ։ Կամաւոր ազատն ընտրելով խնդրեց որ Յունաստան երթայ , բայց նա առարկեց թէ Պրինտիսիի երթալ աւելի նախամեծար կը համարէ , ուստի այնպէս տրուեցաւ ։ Միտհաթ փաչա աւելցուց թէ մեկնելու համար պատրաստ ըլլալ

չունի , 500 ոսկւոյ գումար մը արուեցաւ իրեն , եւ վերջապէս իրեն համար պատրաստուած Խղէնին չոգենաւը հնձնելով մեկնեցաւ » ։

Լեւանդի այս դրածներուն ինչ ասելիան մարդ հասարակ ընծայելու է չենք դիտեր , սի կրնար ըլլալ թէ՝ Մխոհմի վաչային վերայ խօսուածներն չարախօսութեան արդիւնք ըլլան քան նի որ ի պաշտօնէ նորա յանդգնայ եւ գտռտալարատութեան վճիռըն Օսմանեան ժողովրդեան հազորդուած չէ ։

ՆՈՐ ԵՊԱՐՔՈՍԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆՆ

Բարձր. Մեծ Եպարքոս Նահէմ փաշա երեքշաբթի օր չերջաբերական մը զրկեց Թուրքիոյ հանդին պատասխ կուսակալներուն եւ իր Եպարքոս անուանակին ծանուցանելով հրաւիրեց որ Օսմանեան Սահմանադրութեան տրամադրած մէն մի իրաւունքներն եւ իրենց վերայ դրած նոր պարտականութիւններն առնային ճշտութեամբ եւ հաւատարմութեամբ կատարին եւ տէրութեան սահմեն կարգի հպատակաց անպորութիւնն ու իրաւունքներն պաշտպանին , եւ եթէ հակառակ վարմանց մէջ երեւին ծանր պատասխանատուութիւն պիտի հրաւիրուին իրենց վերայ ։

ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ՍԵՐՎԻՈՅ ԵՒ ԳԱՐԱՏԱՂԻ ՀԵՏ

Մեր անցեալ չորեքի առտու թուղթը՝ Բ. Դրան Սերվիոյ եւ Գարատաղի հետ սկսած բանակցութեանց վերայ քիչ շատ տեղեկութիւն հազորդած էինք , այսօր ալ Բ. Դրան Սերվիոյ ըրած առաջարկութեանց համառօտութիւնն կ'ամփոփենք ։

Վիէննայէն հասած հեռագիր մը կ'ծանուցանէ թէ՝ Բ. Դուռն հրաւիրած է զՍերվիա որ վաղօր իշխանութեամբ մէկն ղրկէ ի Կ. Պոլիս խաղաղութիւնը վերահաստատելու համար բանակցելու ։ Եւ թէ այս մասին Բ. Դուռն հետեւեալ առաջարկութիւնները ըրած է Սերվիոյ ։

Ա. Գաւերաղմող տէրութեանց պատերազմի առաջ ունեցած վիճակին , առանց տարածութեան սահմանաց ։ Բ. Սերվիա

տուգանք չվճարէ ։ Գ. Սերվիոյ բերդերն չպիտի պրաւունն, բայց սա երաշխաւոր պիտի տայ յապստամբ նորէն չպատերազմելու համար ։

Զենք պիտեր թէ՝ սկզբնաւած այս բանակցութիւնք ի՞նչ ասպնձան յաջողութիւն պիտի ունենան ։ Կ'հաւատան թէ Սերվիա նոր նուիրակ մի ալ ճանրայ հանած է դէպ ի Բեղոպուրկ՝ Ռուսիոյ կառավարութեան վերջին կարգն իմանալու թէ՝ Ռուսիա պիտի նպաստէ, թէ ի՞նչ աստիճան պիտի օգնէ Սերվիոյ՝ եթէ Սերվիա Բ. Դրան վերջին հաչտարար առաջարկն ալ մերժէ ։ Միւս կողմանէ ալ կ'հաւատան թէ՝ Ռուսիոյ Ձարն ստիպած է զՄիլան Իչխան Բ. Դրան հետ պատուաւոր խաղաղութիւն մը կնքելու ։

Գաբատաղի Նիքիթա Իչխանին հետ ալ բանակցելու պաշտօնըն Ցակոբ Կասանդ վաչայի որուած է եւ կըսուի թէ՝ Գաբատաղի հանար վարք ու աննչան դիջումներ պիտի ընէ Բ. Դուռն լմնայելով երկրին աւերումն եւ ին'չ որ Օսմ. վեհանձնութեան կ'պատկանի այն հաստատապէս պիտի գործադրէ ի լարուածքն եւ յանդորրութիւն երկրին՝ սակայն կըսուի թէ՝ Գաբատաղի Իչխանն տակաւին հաչտութեան բանակցութեան մըտնելու հաւանութիւն տուած չէ եւ ըստ ոմանց կուզէ եղեր հասկընալ թէ՝ Բ. Դուռն ի՞նչ հիմանց վերայ հաչտութեան բանակցութիւններն պիտի ընէ երբն հետ եւ թէ՝ պիտի ընդունի իւր երկրին ընդարձակելու առաջարկն ։

Դժուարին է գուշակել այսպիսի առաջարկութիւններով եւ պայմաններով բանակցութեան մտնող իչխանութեանց չուտով հաչտարար միջոցներ գտնելն, քանի որ մէկ կողմանէ ալ ներքին ժողովներ պակաս չեն ։

—

Կ'հաւատան թէ՝ Սուլթան Մուրատ Ե. Զրադանի պալատէն Թօփ-Գարուի պալատն փոխագրուած է ։

— Կայսերական կառավարութեան կողմանէ վերստին Սերվիոյ դրամագլխոյ 200,000 Մարքնոց չէնդրի հրացան եւ 30,000 Րէվոլվըր ապսպրուեր է ։

ՍԻՆՋՆՈՐԴ

ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԴԱՍԵՐՈՒ

Ե Ւ

ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՄԱՐ

ԵՐԿԱՄԻՐԵՑ

Մ· Ց· ԱՂԱԳԱԼԵԱՆ

Այս ամենաարեւոր գիտութեան սկզբունքները ժողովրդեան ամէն կարգերուն մէջ տարածուլ եւ միանգամայն Ազգային վարժարանաց Նախնական դասերու յարմար դասագրքի մը պահանջումը՝ ի վաղուց անտի զգալի եղած էր։ Ահա այս ճգնաժամը լեցուց այս անգամ Մեծ· Մկրտիչ էֆ· Ազապալեան երկաթիրելով եւ հրատարակելով ասոր կարեւոր մատենիկը, զոր վերստին կրկին նպատակներուն խիստ լաւ կը ծառայէ։

190 երեսէ բաղկացեալ եւ 38 փորագրեալ պեղեցիկ պատկերներով զարդարուած է։

Կը գտնուի Սէնթ–Ջամի չիլինկիրեր ճատէսի թիւ 2 Ս· Ղ· եւ Եազմաճեան Գրատունը եւ ուրիշ Գրավաճառաց քով։

Գին 1 Ֆրանք։

ԵՒԼՐՈՊԱՑԻ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ

ՀԱՄԱՌՕՏ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Տ· Խորէն բահանայ Կ· Պարթեւեան

Ամէն Հայ գրավաճառաց քով կը գտնուի· Գին 5 ղրուշ։

ՏՊՐ—ԽՄՐԱԳԻՐ

ՀՄԱՅԵԱՆ Ե· Վ· ԳԻՄԱՐԱԵԱՆ

Կ· ՊՕԼԻՍ

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ

ԵԿԵՂ գաբու· Գուամալ փողոց բիւ 200